Անկախ աուդիտորական եզրակացություն և ֆինանսական հաշվետվություններ 2021թ. վերաբերյալ

«ԻՆՏԵԿՈ ԷՆԵՐԳՈ»
Փակ Բաժնետիրական Ընկերություն

Երևան 2022

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1-3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	4-5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9-27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Է Ն - Ա Ո Ւ Դ Ի Տ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

" N – AUDIT "

LIMITED LIABILITY
COMPANY

375002, Երեւան, Թումանյան-40-28
375002, Yerevan, st. Tumanyan-40-28
Հեռ. ☎(37410) 53-40-41, (37491, 94) 40-80-41
e-mail: mail@n-audit.am

Ռեեստրում գրանցման համար
ՀԳԳՀ 1 20 0400

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԻՆՏԵԿՈ ԷՆԵՐԳՈ» ՓԲԸ

Բաժնետերերին և ղեկավարությանը

Կարծիք՝

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԻՆՏԵԿՈ ԷՆԵՐԳՈ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև, այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր՝

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերության՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների, և պահպանել ենք էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք այն եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները կատարված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կարող է կորցնել իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները, և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ՝ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտաբերված էական թերությունների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Տնօրեն-աուդիտոր՝ Որակավորված աուդիտոր՝

Վարդան Նիկողոսյան Նունե Ալեքսանյան

01504398
«Է Ն-ԱՈՒԴԻՏ»
«ЭН-АУДИТ»
«N-AUDIT»

Ք. Երևան

29.06.2022թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

ԱԿՏԻՎ	Ծանոթ.	31.12.2020թ.	31.12.2021
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	548	837
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	5	468	375
Ներդրումային գույք			
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ			
Հետաձգված հարկային ակտիվներ		-	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	6	1.276.347	7.638.642
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1.277.364**	**7.639.854**
II. Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	1.187.267	822.043
Անավարտ արտադրություն	8	26.437	35.986
Արտադրանք			
Ապրանքներ			
Տրված ընթացիկ կանխավճարներ	10	351.436	113.392
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	11	2.586.137	4.478.860
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	12	205.112	150.847
Այլ դեբիտորական պարտքեր			
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	147.988	22.820
Այլ ընթացիկ ակտիվներ	13	1.284	34.343
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**4.505.661**	**5.658.291**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**5.783.025**	**13.298.145**

ՊԱՍԻՎ

III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	14	100	100
Տեղաբաշխված և չվճարված կապիտալ			
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ			
Կուտակված շահույթ	15	2.045.772	5.579.587
Պահուստային կապիտալ			
Ընդամենը սեփական կապիտալ		**2.045.872**	**5.579.687**
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանակային վարկեր և փոխառություններ	16	5.500	213.500
Հետաձգված հարկային պարտավորություններ	17	23	2.005
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**5.523**	**215.505**
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր			
Կարճաժամկետ փոխառություններ			
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	18	2.302.961	5.179.974
Ստացված ընթացիկ կանխավճարներ	19	970.265	1.556.337
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	20	454.868	756.132
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	20	311	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճ. հատուցումների գծով			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին /հիմնադիրներին/			
Այլ կրեդիտորական պարտքեր			
Եկամուտներին վերաբերող շնորհներ			
Ընթացիկ պահուստներ	21	3.225	10.510
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**3.731.630**	**7.502.953**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**5.783.025**	**13.298.145**

Ղեկավար՝ Ալֆրեդ Հարությունյան

Ֆին. տնօրեն՝ Լիանա Մանուկյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված հաշվետվության հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Ցուցանիշի անվանումը	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտադրանքի,ապրանքների,աշխատանքների, ծառայությունների իրացումից զուտ հասույթ	7.076.298	15.243.731
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	-4.564.993	-10.897.739
Համախառն շահույթ (վնաս)	2.511.305	4.345.992
Իրացման ծախսեր	-	-434
Վարչական ծախսեր	-8.367	-48.290
Արտադրանքի,ապրանքների,աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	2.502.938	4.297.268
Գործառնական այլ եկամուտներ	94	1
Գործառնական այլ ծախսեր	-3.235	-9.478
Գործառնական շահույթ (վնաս)	2.499.797	4.287.791
Ֆինանսական ծախսեր		-22.798
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս),այդ թվում՝	525	47.391
Հիմնական միջոցներից օտարում		
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	2.500.322	4.312.383
Արտասովոր դեպքերից շահույթ		292
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը	2.500.322	4.312.675
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	-451.958	-778.860
Զուտ շահույթ (վնաս) շարունակվող գործունեությունից	2.048.364	3.533.815
Այլ համապարփակ Ֆինանսական արդյունք		
Էական սխալների ուղղում		
Ընդհանուր համապարփակ Ֆինանսական արդյունք	2.048.364	3.533.815

Ղեկավար՝ Ալֆրեդ Հարությունյան

Ֆին. տնօրեն՝ Լիանա Մանուկյան

Համափարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված հաշվետվության հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

1. Նախորդ տարի /ժամանակաշրջան/

Ցուցանիշի անվանումը	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ				
	Կանոնադրական կապիտալ	Չվճարված կապիտալ	Կուտակված շահույթ /վնաս/	Պահուստային կապիտալ	Ընդամենը
Մնացորդը առ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100		-2.592		-2.492
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք			2.048.364		2.047.684
Շահաբաժիններ					
Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում)					
Մնացորդը առ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100		2.045.772		2.045.872

2. Ընթացիկ տարի /ժամանակաշրջան

Մնացորդը առ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100		2.045.772		2.045.872
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք			3.533.815		
Շահաբաժիններ					
Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում)					
Մնացորդը առ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100		5.579.587		5.579.687

Ղեկավար Սվետլանա Հարությունյան Ֆին. տնօրեն Լիանա Մանուկյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված հաշվետվության հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

	2020	2021
	Արժույթ '000	Արժույթ '000
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցներ առևտրային գործունեությունից	4,379,038	11,904,839
Դրամական միջոցներ այլ գործառնական գործունեությունից	124	25
Դրամական միջոցներ Շնորհներից և անհատույց ստացումներից	486	-
Վճարումներ մատակարարներին ապրանքների և ծառայությունների դիմաց	(2,395,988)	(4,177,738)
Վճարումներ աշխատակիցներին և հօգուտ նրանց	(47,294)	(139,362)
Վճարումներ այլ գործառնական ծախսերի դիմաց	(512,751)	(1,582,657)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	1,423,616	6,005,108
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Դրամական միջոցներից զուտ հոսքեր տրամադրված փոխառություններից	(1,276,347)	(6,154,295)
Վճարումներ հիմնական միջոցների ձեռքբերման դիմաց	(833)	(548)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	(1,277,181)	(6,154,843)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Դրամական միջոցներ փոխառություններից - բաժնետերեր և կապակցված կողմեր		
Փոխառությունների մարում - բաժնետերեր և կապակցված կողմեր	-	-
Դրամական միջոցներ այլ ֆինանսական գործունեությունից	-	24,567
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	-	24.567
Դրամական միջոցների զուտ աճ/նվազում	146,435	(125,168)
Ճշգրտումներ	-	-
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	1,553	147,988
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	147,988	22,820

Ղեկավար՝ Ալիքեր Հարությունյան Ֆին. տնօրեն՝ Լիանա Մանուկյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված հաշվետվության հետ մեկտեղ, որը ներկայացվել է դրամարկղային մեթոդով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ

«Ինտեկո Էներգո» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2017թ թվականի մարտին, գրանցման համարը 264.120.948969, գրանցված ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 07.03.2017թ:

Ընկերության կանոնադրությունը հաստատվել է ՓԲԸ միակ հիմնադիր Ալֆրեդ Հարությունյանի ընդհանուր ժողովի որոշմամբ:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 100.000 դրամ: Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և սեփականության իրավունքով ամրագրված միակ բաժնետիրոջը:

Ընկերությունը գրանցվել է հարկային տեսչությունում և ստացել հարկ վճարողի հաշվառման համար 00163695:

Աշխատակիցների ցուցակային թվաքանակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 27 անձ, իսկ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 68 անձ:

Ընկերությունը մասնաճյուղեր, ներկայացուցչություններ կամ հիմնարկներ չունի:

Համաձայն կանոնադրության Ընկերության գործունեության նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

Ընկերության գտնվելու վայրն է ՀՀ, Երևան, Կոմիտաս 51/4, 3-րդ հարկ, գրասենյակ 11

1.2.Ընկերության կառավարման մարմինները.

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն 31.12.2021թ դրությամբ իրականացրել է տնօրենը՝ Ալֆրեդ Հարությունյանը:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1. Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

2.2.Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության հաշվետու արժույթի միավորը Հայաստանի Հանրապետության դրամն է:

Ֆինանսական հաշվետվությունները ավելի դյուրին ընկալելի դարձնելու համար ընկերությունը տեղեկատվությունը ներկայացնում է հաշվետու արժույթի՝ հազար դրամներով, ամբողջական թվերով:

2.3. Անընդհատությունը

Ընկերությունը 2020 թվականի ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է անընդհատության հիմունքով:

2.4. Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը

Ընկերությունը ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության, կազմել է կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվել է ուղղակի մեթոդով:

2.5. Էականությունը և միավորումը

Ընկերությունը ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս համանման հոդվածների յուրաքանչյուր էական դաս ներկայացրել է առանձին: Ընկերությունը ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս առանձին է ներկայացրել նաև տարբեր բնույթի և գործառույթի հոդվածները, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք էական չեն:

2.6. Չափման հիմունքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.7.Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառումը

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Դատողությունները, գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները ենթակա են վերանայման, երբ ի հայտ է գալիս լրացուցիչ տեղեկատվություն:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր

3.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառումը

Ընկերությունը կիրառել է հաշվապահական հաշվառման միևնույն քաղաքականությունը իր ֆինանսական վիճակի մասին՝ ՖՀՄՍ-ով սկզբնական հաշվետվության մեջ և ՖՀՄՍ-ով ներկայացված իր սույն ֆինանսական հաշվետվություններում՝ ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում:

3.2. Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը հաշվետու ամսաթվի՝ 31.12.2021թ., դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.

բ) համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը՝հաշվետու ժամանակաշրջանի՝ 2021թ. համար: Ընկերությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը.

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը՝ հաշվետու՝ 2021թ. ժամանակաշրջանի համար: Տարվա ընթացքում սեփական կապիտալի փոփոխությունները առաջացել է վնասից:

դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը՝ հաշվետու ժամանակաշրջանի՝ 2021թ. համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով ուղղակի մեթոդը: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական և ոչ գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքեր

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի՝ 2021 թվականի (հաշվետու տարվա) ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը:

3.3. Հիմնական միջոցներ

3.3.1.Ճանաչման հիմունքները

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի ընկերություն, և

բ) միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

3.3.2. Չափման հիմունքները

Հիմնական միջոցի միավորը, որը ճանաչվել է որպես ակտիվ, չափվում է իր սկզբնական արժեքով: Փաստացի արժեքը ներառում է գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և աշխա-

տանքային վիճակի բերելու ցանկացած այլ ուղղակի ծախս:

3.3.2.1. Հետագա ծախսումները

Հիմնական միջոցների որոշ միավորների մասերը կարող են պահանջել պարբերաբար փոխարինում: Հիմնական միջոցների միավորները կարող են ձեռք բերվել նաև պարբերական փոխարինման գործընթացի հաճախականությունը պակասեցնելու նպատակով: Ընկերությունը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում ճանաչում է նման միավորի փոխարինվող մասի ծախսումները, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ճանաչման չափանիշները:

3.3.2.2 Չափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցի հետագա չափման համար կիրառվում է սկզբնական արժեքի (ինքնարժեքի) մոդելը, այսինքն՝ հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց և սկզբնական արժեքով չափումից հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

3.3.3. Մաշվածությունը

Հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի համար, որի արժեքը նշանակալի է միավորի ընդհանուր արժեքի նկատմամբ, մաշվածությունը հաշվարկվում է առանձին: Հիմնական միջոցի միավորի նշանակալի մասերի միևնույն օգտակար ծառայության ժամկետ ունենալու դեպքում խմբավորվում են մաշվածության գումարը որոշելիս: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի մաշվող գումարը (ակտիվների սկզբնական արժեք (ինքնարժեք)՝ հանած մնացորդային արժեք) իր օգտակար ծառայության ընթացքում պարբերական հիմունքով բաշխելու միջոցով՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը, որը արտացոլում է այն մոդելը, որով Ընկերությունը ակնկալում է սպառել ակտիվի տնտեսական օգուտները: Ակտիվի մնացորդային արժեքը, օգտակար ծառայությունը և մաշվածության հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա տարեվերջի դրությամբ, և եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից և(կամ) ընտրած մեթոդից, փոփոխությունները հաշվառվում են որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատումներում՝ համաձայն ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ստանդարտի: Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել մաշվածության հաշվարկման դրույքաչափերի, ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա այդ ակտիվի մաշվածությունը վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման համար՝ ըստ հիմնական միջոցների ներքոհիշյալ խմբերի, կիրառվում են հետևյալ տարեկան դրույքաչափերը.

Հ/Հ	Հիմնական միջոցը	Օգտակար ծառայության ժամկետը (տարի)	Տարեկան մաշվածության դրույք(%)
1.	շենք, շինություններ	20	5
2.	մեքենաներ և սարքավորումներ,	5-8	20-12.5
3.	տրանսպորտային միջոցներ	5-8	20-12.5
4.	արտադրական և տնտեսական գույք	5	20
5.	համակարգչային սարքավորումներ	1	100

6.	այլ հիմնական միջոցներ	5-8	20-12.5

3.3.4. Ապաճանաչում

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորը ապաճանաչվում է, բացառությամբ հետադարձ վարձակալությամբ վաճառքի դեպքում: Օգուտները չեն դասակարգվում որպես հասույթ: Հիմնական միջոցների միավորի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն:

3.4. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է միմիայն այն դեպքում, երբ հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն և ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Ընկերության կողմից ձեռքբերված ոչ նյութական ակտիվները՝ համակարգչային ծրագրերը, լիցենզիաները հաշվառվում են սկզբնական արժեքով և ամորտիզացվում են նախատեսված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում (համաձայն ՀՀՄՍ 38-ում ներկայացված սկզբնական արժեքի մոտեցմանը):Եթե ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետը հնարավոր չէ արժանահավատորեն որոշել, ապա այն ընդունվում է 10 տարի և կիրառվում է տարեկան ամորտիզացիայի 10 տոկոս դրույքաչափ:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են օգտակար ծառայության ընթացքում՝ գծային հիմունքով: Ամորտիզացիայի հաշվարկման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

3.5. Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է դրանց ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է ՖԻՖՈ (առաջինը մուտք, առաջինը ելք) մեթոդով:

Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման հարկերը և տուրքերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են Ընկերությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների և նյութերի ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նպանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Պաշարների վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները: Դրանք ներառում են նաև պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք

կատարվում են նյութերը պատրաստի արտադրանք դարձնելու (վերամշակելու) ընթացքում:

Պաշարների իրացման զուտ արժեքը դա սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

3.6. Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը գնահատում է՝ առկա է արդյո՞ք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը(բացառությամբ պաշարների) կարող են արժեզրկված լինել: Եթե կա հնարավոր արժեզրկման որևէ հայտանիշ, ապա ցանկացած ազդեցության ենթարկված ակտիվի (կամ համապատասխան ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարը գնահատվում է և համեմատվում դրա հաշվեկշռային արժեքի հետ: Եթե ակտիվի գնահատված փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա գնահատված փոխհատուցվող գումարը և արժեզրկումից կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին գնահատում է, թե առկա է արդյո՞ք որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվի գծով նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա Ընկերությունը գնահատում է այդ ակտիվի փոխհատուցվող գումարը: Ակտիվի գծով նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է այն և միայն այն դեպքում, եթե, սկսած այն պահից, երբ վերջին անգամ ճանաչվել էր արժեզրկումից կորուստ, տեղի են ունեցել փոփոխություններ ակտիվի փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, սակայն ոչ ավելի քան այն հաշվեկշռային արժեքը, որը կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

3.7. Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին ընկերությունը այն չափում է իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

3.7.1. Դրամական միջոցները և դրանց համարժեքները

Որպես դրամական միջոցներ են ճանաչվում դրամարկղում առկա կանխիկ դրամը և Հայաստանի Հանրապետության բանկերում տեղաբաշխված ընթացիկ հաշիվներում առկա մնացորդները (ազգային արժույթով և արտարժույթով) և ներդրված ավանդները:

3.7.2. Առևտրական և այլ դեբիտորական պարտքերը

Հիմնական վաճառքները կատարվում են վճարման սովորական (պայմանագրային և (կամ) սովորաբար ընդունված) պայմանների հիմունքով, և դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն: Երբ պարտքը հետաձգվում է վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները վերլուծվում են՝ որոշելու համար, թե արդյո՞ք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ գումարները փոխհատուցելի չեն: Եթե գումարները փոխհատուցելի չեն, արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Արտարժույթով արտահայտված առևտրական դեբիտորական պարտքերը վերահաշվարկվում են դրամով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Արտարժույթի փոխարժեքային օգուտները կամ վնասները ներառվում են այլ եկամտում կամ այլ ծախսերում:

3.7.3. Առևտրական կրեդիտորական պարտքեր

Առևտրական կրեդիտորական պարտքերը վճարման սովորական (պայմանագրային և (կամ) սովորաբար ընդունված) պայմանների հիմունքով պարտականություններ են և տոկոսակիր չեն:

3.7.4. Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ

Ամորտիզացված արժեքը չափվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Այսինքն արդյունավետ տոկոսադրույքը որոշվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահի դրությամբ, ելնելով հաշվեկշռային արժեքից և գնահատված վճարման կամ ստացման ենթակա դրամական միջոցների հոսքերից և ակնկալվող ժամկետներից:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի համաձայն՝

ա) ֆինանսական ակտիվի (պարտավորության) ամորտիզացված արժեքը ապագա դրամական մուտքերի (վճարումների) ներկա արժեքն է՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով.

բ) ժամանակաշրջանի տոկոսային ծախսը (եկամուտը) հավասար է ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական պարտավորության (ակտիվի) հաշվեկշռային արժեքի և ժամանակաշրջանի արդյունավետ տոկոսադրույքի արտադրյալին:

Արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ վաղաժամկետ վճարման, գնման կամ համանման օպցիոնները), սակայն չպետք է հաշվի առնի ապագա պարտքային կորուստները:

3.7.5. Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ապաճանաչումը

Ընկերությունը ապաճանաչում է (ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից հեռացնում է) ֆինանսական ակտիվը այն և միայն այն դեպքում, երբ՝

(ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը. կամ

(բ) փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ընկերությունը ապաճանաչում է (ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից հեռացնում է) ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) այն ու միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

3.8. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են՝ կա՛մ շնորհը գրանցելով որպես հետաձգված եկամուտ, կա՛մ որպես նվազեցում ակտիվի հաշվեկշռային արժեքը որոշելիս:

3.9. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) ընկերությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) ընկերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորա-

բար բխում է սեփականության իրավունքից, և ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն ընկերություն.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի ընկերություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Գործարքի ավարտվածության աստիճանը որոշվում է կատարված աշխատանքների ուսումնասիրությամբ:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն փաստացի կրած այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն և որոնք ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են:

Այլ անձանց կողմից ընկերության ակտիվներն օգտագործելիս առաջացող հասույթները՝ տոկոսներ, ռոյալթիներ և շահաբաժիններ, ճանաչվում են ստորև սահմանված հիմունքներով, երբ՝

ա) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.

բ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթների գումարը:

Հասույթը ճանաչվում է հետևյալ հիմունքներով՝

ա) տոկոսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը,

բ) ռոյալթիները պետք է ճանաչվեն հաշվեգրման հիմունքով՝ համապատասխան համաձայնագրի բովանդակությանը համաձայն.

գ) շահաբաժինները պետք է ճանաչվեն, երբ սահմանված է վճարը ստանալու Ընկերության իրավունքը:

3.10. Վարձակալություն

Ընկերությունը վարձակալությունը դասակարգում է որպես ֆինանսական, եթե վարձակալին է փոխանցվում սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները:

Ընկերությունը վարձակալությունը դասակարգում է որպես գործառնական, եթե վարձակալին չեն փոխանցվում սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները:

3.11. Աշխատակիցների հատուցումներ

3.11.1. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ընկերությանը մատուցել է ծառայություն, ընկերությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՖՀՄՍ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ՝ պաշարների և (կամ)

հիմնական միջոցների):

Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ամենամյա արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որն ընկերությունը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

3.11.2. Սահմանված մասհանումների պլաններ

Երբ աշխատակիցը ժամանակաշրջանի ընթացքում ծառայություն է մատուցում Ընկերությանը, Ընկերությունը այդ ծառայության դիմաց սահմանված մասհանումների պլանին վճարվելիք մասհանումը ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված մասհանումները հանելուց հետո: Եթե արդեն վճարած մասհանումը գերազանցում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը ծառայության դիմաց վճարվելիք մասհանումը, ապա Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի. և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ՖՀՄՍ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ՝ պաշարների և (կամ) հիմնական միջոցների):

3.12. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Զեղչման դրույքը (կամ դրույքները) այն դրույքն (կամ դրույքներն) է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:Զեղչման դրույքը արտացոլում է այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է:

Պահուստը օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.13. Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, ընկերության կողմից կապիտալացվում են՝ որպես այդ ակտիվի արժեքի մաս: Ընկերությունը կապիտալացվող փոխառության ծախսումներ չունի:

Ընկերությունը այլ փոխառության ծախսումները ճանաչում է որպես ծախս այն հաշվետու ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են:

3.14. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները

3.14.1. Ֆունկցիոնալ արժույթը

Ֆունկցիոնալ արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ ընկերությունը իրականացնում է գործունեություն և որտեղ հիմնականում ստացվում և ծախսվում են դրամական միջոցները:

Ֆունկցիոնալ արժույթը որոշելիս ընկերությունը հաշվի է առնում ստորև նշված գործոնները՝

ա) արժույթը՝

-որը հիմնականում ազդում է ապրանքների և ծառայությունների վաճառքի գների վրա (հաճախ այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են). և

-այն երկրի արժույթը, որի մրցակցային գործոններն ու կանոններն են հիմնականում որոշում իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները.

բ) արժույթ, որը հիմնականում ազդում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութական և այլ ծախսումների վրա (նշվածը հաճախ այն արժույթն է, որով նման ծախսումները սահմանվում և կատարվում են):

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է:

3.14.2. Արտարժույթով գործառնությունների արտացոլումը ֆունկցիոնալ արժույթով.

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

	31.12.2021	31.12.2020
1 Ռուսական ռուբլի	6.42	7.02
1 ԱՄՆ դոլար	480.14	522.59
1 Եվրո	542.61	641.11

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով, և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում(ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են, բացառությամբ

- Դրամային հոդվածի հետ կապված փոխարժեքային տարբերությունների, որոնք կազմում են արտերկրյա ստորաբաժանումում հաշվետու կազմակերպության կատարած զուտ ներդրման մի մասը,

որոնք կոնկրետ իրավիճակից ելնելով, ճանաչվում են ընկերության առանձին ֆինանսական հաշվետվությունների կամ արտերկրյա ստորաբաժանման անհատական ֆինանսական հաշվետվությունների շահույթում կամ վնասում: Համախմբված ֆինանսական հաշվետվություններում, երբ արտերկրյա ստորաբաժանումը դուստր կազմակերպություն է, այդպիսի փոխարժեքային տարբերությունները սկզբնապես ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և սեփական կապիտալից վերադասակարգվում են որպես զուտ ներդրման օտարումից շահույթ կամ վնաս:

3.15. Շահութահարկը

Շահութահարկի գծով ծախսը (հարկի գծով եկամուտը) բաղկացած է ընթացիկ հարկի գծով ծախսից (ընթացիկ հարկի գծով եկամտից) և հետաձգված հարկի գծով ծախսից (հետաձգված հարկի գծով եկամտից), որոնց համախառն գումարները ներառված են ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի հաշվարկում:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի (հարկային վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Հետաձգված հարկը վճարման կամ փոխհատուցման ենթակա շահութահարկերի գումարներն են՝ կապված ժամանակավոր տարբերությունների, հարկային վնասի և (կամ) հարկային զեղչերի հետ:

Ֆինանսական հաշվետվություններում ժամանակավոր տարբերությունները որոշվում են՝ ֆինանսական հաշվետվություններում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները համեմատելով համապատասխան հարկային բազայի հետ:

Ընկերության ներկայացվող ֆինանսական հաշվետվություններում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և համապատասխան հարկային բազաների միջև տարբերություններ չկան: Այսինքն ֆինանսական հաշվետվություններում ժամանակավոր տարբերություններ չկան:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք ապագայում ստացվելիք հարկվող շահույթից առաջացող վճարման ենթակա շահութահարկերի գումարներն են:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի գծով այն չափով, որքանով հավանական է, որ ընկերությունը ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը :

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի հարկային մարմիններին (կփոխհատուցվի հարկային մարմինների կողմից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլեն հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով ընկերությունը, հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժա-

մանակաշրջանի վերջում: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այնքանով, որքանով հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը: Առաջացող հետաձգված հարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.16. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ

3.16.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն.

Ընկերության ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ընտրվել է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

ՖՀՄՍ-ները ներկայացնում են այնպիսի հաշվապահական հաշվառման քաղաքականություններ, որոնք ՀՀՄՍԽ-ի որոշմամբ հանգեցնում են ֆինանսական հաշվետվություններում գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների վերաբերյալ տեղին և արժանահավատ տեղեկատվության ներկայացմանը:

3.16.2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընկերությունը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

ա) պահանջվում է որևէ ՖՀՄՍ-ով, կամ

բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

Եթե ընկերությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որքան քաղաքականության հետընթաց կիրառումը իրագործելի է: Հետընթաց կիրառությունը նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը: Ճշգրտման հանրագումարը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Սովորաբար, ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին:

Երբ ընկերության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա ընկերությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում ընկերությունը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն իրականացվում է, եթե նույնիսկ հնարավոր չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառել ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

3.16.3. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

3.16.4. Սխալներ

Ընկերությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց, բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը, դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

Եթե անիրագործելի է որոշել մեկ կամ ավելի նախորդող ժամանակաշրջաններ ներառող հաշվետվություններում ներկայացված համադրելի տեղեկատվության վրա կոնկրետ ժամանակակաշրջանին վերաբերող սխալի հետևանքները, ապա Ընկերությունը վերահաշվարկում է այն ամենավաղ ժամանակաշրջանի (որը կարող է լինել ընթացիկ ժամանակաշրջանը) ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները, որի համար հետընթաց վերահաշվարկումն իրագործելի է:

Եթե ընթացիկ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ բոլոր նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող սխալի կուտակային հետևանքի որոշումն անիրագործելի է, ապա Ընկերությունը վերահաշվարկում է համադրելի տեղեկատվությունը՝ հնարավոր ամենավաղ ամսաթվից սկսած՝ սխալն առաջընթաց ուղղելու համար:

3.17. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Ընկերությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Եթե ընկերությունը շահաբաժիններ է հայտարարում հաշվետու ժամանակաշրջանից հետո, ապա չի ճանաչում այդ շահաբաժինները որպես պարտավորություն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

4. Հիմնական միջոցներ

	Սարքավորումներ	Արտադրական գույք	Այլ	**Ընդամենը**
	Արժույթ'000		Արժույթ'000	Արժույթ'000
Սկզբնական կամ վերագնահատված արժեք				
Ժամանակաշրջանի սկիզբ	397		192	589
Ավելացում		85	387	472
Օտարում	-		-	-
Վերագնահատումից աճ				
Ժամանակաշրջանի վերջ	-		-	-

Կուտակված մաշվածություն- և արժեզրկում				
Ժամանակաշրջանի սկիզբ	31		10	41
Հիմնական միջոցների մաշվածություն	95	40	49	184
Օտարված հիմնական միջոցների կուտակված մաշվածություն	-		-	-
Հիմնական միջոցների արժեզրկում				
Ժամանակաշրջանի վերջ	-		-	-
Հաշվեկշռային արժեք				
Ժամանակաշրջանի սկիզբ	366	-	182	548
Ժամանակաշրջանի վերջ	271	45	520	836

5. *Ոչ նյութական ակտիվներ*

	Լիցենզիաներ և վստահագրեր	Այլ	*Ընդամենը*
Սկզբնական կամ վերագնահատված արժեք			
Ժամանակաշրջանի սկիզբ	407	467	874
Ավելացում	160	-	160
Օտարում	-		-
Վերագնահատումից արժեքի աճ	-		-
Ժամանակաշրջանի վերջ			
Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում			
Ժամանակաշրջանի սկիզբ	331	75	406
Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	160	93	253
Օտարված ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	-		-
Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների արժեզրկում	-		-
Ժամանակաշրջանի վերջ	-		-
Հաշվեկշռային արժեք			
Ժամանակաշրջանի սկիզբ	*76*	*392*	*468*
Ժամանակաշրջանի վերջ	*76*	*299*	*375*

6. *Այլ ոչ ընթացիկ ակտիվներ*

	31.12.2020թ.	31.12.2021թ.
Երկարաժամկետ փոխառություններ	1.276.347	7.638.642

7. *Պաշարներ*

	31.12.2020	ավելացում	պակասում	31.12.2021
Ընդամենը, այդ թվում՝	1.187.267			822.043
Նյութեր	9.247	110.928	107.211	12.964
Վառելիք	6.314	-	6.314	-
Շինանյութեր	1.171.497	8.665.471	9.039.777	797.191
Այլ	79	21.206	9.499	11.787
Արագամաշ առարկաներ	129	654	681	101

8. *Անավարտ արտադրություն*

	31.12.2020թ.	31.12.2021թ.
Աշխատանքների գծով	26.437	35.986

9. *Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*

Դրամական միջոցների հոսքերի մասին Ընկերության միավորված հաշվետվությունը կազմվել է ուղղակի մեթոդով՝ դրամական միջոցների հոսքերը դասակարգելով ըստ գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեության:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են դրամարկղի կանխիկ դրամից, ցպահանջ ավանդներից, ինչպես նաև կարճաժամկետ և բարձր իրացվելի այն ներդրումներից, որոնք կարող են հեշտ փոխարկվել դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և չեն ենթարկվում արժեքի փոփոխման նշանակալի ռիսկի:

Ստորև ներկայացվում է Ընկերության դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ տեղեկատվությունը

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդամենը, այդ թվում	147.988	22.820
1. Դրամարկղ ՀՀ դրամ	147.592	13.872
2. Բանկերում այդ թվում՝ հաշվարկային հաշիվ	396	8.948

10. *Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար*

	31.12.2020թ.	31.12.2021թ.
Ընդամենը, այդ թվում՝	351.436	113.392
Ապրանքների գծով	422	22.366
Նյութերի գծով	4.015	15.701
Ծառայությունների գծով	346.999	75.325

11. Դեբիտորական պարտքեր

	31.12.2020թ.	31.12.2021թ.
Ընդամենը, այդ թվում՝	2.586.137	4.478.860
Վաճառքի գծով	14.724	11.684
Ծառայությունների գծով	297.303	151.455
Աշխատանքների գծով	2.274.110	4.315.721

12. Կանխավճարներ բյուջեի գծով (հարկ և պարտ. վճար)

	31.12.2020թ.	31.12.2021թ.
Ընդամենը, այդ թվում՝	205.112	150.847
Միասնական հաշիվ	9.793	60.991
ԱԱՀ	195.285	89.813
Այլ վճարներ	34	42

13. Ընթացիկ ակտիվներ /հետաձգված հարկային ակտիվներ/

	31.12.2020թ.	31.12.2021թ.
Ընդամենը, այդ թվում՝	1.284	34.342
Հետաձգված ԱԱՀ	1.284	34.342

14. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 100.000 դրամ, որը կազմում է 100.000 հատ հասարակ անվանական բաժնետոմս, որի անվանական արժեքը կազմում է 1 ՀՀ դրամ:

Ընկերության հայտարարված հասարակ բաժնետոմսերի առավելագույն ծավալը կազմում է 100.000 դրամ՝ 100.000 հատ 1 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերով:

Ընկերության կանոնադրական կապիտալը ամբողջությամբ վճարված է:

Ընկերության մասնակիցներն են.

Մասնակիցը	Գրանցման վայրը	Մասնակցության չափը (%՝)	դրամ	Բաժնեմասերի քանակը
Ալֆրեդ Հարությունյան /ֆիզ.անձ/	ՀՀ	100	100.000	100.000

15. Կուտակված շահույթ (վնաս)

Ընկերությունն իրավունք ունի տարեկան մեկ անգամ իրականացնել իր շահույթի բաշխում ընկերության բաժնետերերի միջև: Ընկերության 31.12.2020թ-ի կուտակված վնասը կազմում է 2.045.772 հազ. Դրամ:

Ընկերության 31.12.2021թ-ի կուտակված շայույթը կազմում է 5.579.587 հազ. Դրամ:

16. Վարկեր և փոխառություններ

	31.12.2020թ	31.12.2021թ
Ընդամենը, այդ թվում՝	5.500	213.500

Երկարաժամկետ փոխառություններ	5.500	213.500

17. Հետաձգված հարկեր

	31.12.2020թ	31.12.2021թ
Ընդամենը	23	2.005

18. Կրեդիտորական պարտքեր

	31.12.2020թ	31.12.2021թ
Ընդամենը, այդ թվում՝	2.302.961	5.179.975
գնումների գծով	1.498.792	3.184.016
ծառայությունների գծով	804.135	1.995.849
ՀՄ-ի գծով	34	110

19. Ստացված կանխավճարներ

	31.12.2020թ	31.12.2021թ
Ընդամենը, այդ թվում՝	970.265	1.556.337
աշխատանքների գծով	970.265	1.556.337

20. Կրեդիտորական պարտքեր բյուջեին (հարկ և պարտ. վճար)

	31.12.2020թ	31.12.2021թ
Ընդամենը, այդ թվում՝	455.178	756.131
Շահութահարկ	451.934	756.131
եկամտային հարկ	2.933	-
- Դրոշմանիշային վճար	72	-
- պարտ. սոց վճար	239	-

21. Ընթացիկ պահուստներ

	31.12.2020թ	31.12.2021թ
աշխատավարձի գծով	3.225	10.510

22. Հասույթ

Ընկերության 2021 թվականի հասույթը գոյացել է

Ընդամենը, այդ թվում՝	15.243.731
- ապրանքների վաճառք	21.931
- աշխատանքների կատարում	15.144.086
- ծառայություն	77.714
Գործառնական գործունեությունից եկամուտ	1

Այդ թվում՝	
- Պաշարների արժեքի փոփոխություն	1
Ոչ գործառնական եկամուտ	525
Այդ թվում՝	
- շնորհներից	22.798
- տոկոսային եկամուտ	24.592
արտասովոր եկամուտ	292

23. Ծախսեր

Ընկերության 2021 թվականի ընթացքում	
- ապրանքների ինքնարժեքը	21.812
- Կատարված աշխատանքների ինքնարժեք	10.807.530
- Ծառայության ինքնարժեք	67.046
Վարչական ծախսեր	48.290
այդ թվում՝	
- աշխատավարձ	27.117
- մաշվածք	93
- գործուղում և ներկայացուցչական	4.376
- գրասենյակային և կոմունալ	6.232
- Աուդիտորական և խորհրդատվական	1.132
- բանկային և ապահովագրություն	3.689
- չփոխհատուցվող ծախսեր	51
- այլ	5.600
Գործառնական ծախսերը կազմել են՝	9.478
Այդ թվում՝	
- տույժ, տուգանք	2.193
- այլ	7.285
ֆինանսական ծախսեր	22.798
- ընթացիկ հարկի գծով ծախս, որից՝	780.842
- հետաձգված ծախս	1.982

24. Կապակցված կողմերի բացահայտում

Ընկերությունը չի հանդիսանում և չունի դուստր կազմակերպություն, չունի իր նկատմամբ վերահսկողություն կամ նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություն, չի հանդիսանում համատեղ ձեռնարկման կողմ:

Համաձայն ՖՀՄՍ-ի կապակցված կողմերի միջև յուրաքանչյուր հնարավոր փոխհարաբերություն դիտարկելիս Ընկերությունը ուշադրություն է դարձնում ոչ միայն տվյալ փոխհարաբերության սոսկ

իրավական ձևին, այլև էությանը:

Կապակցված կողմերի միջև իրականացված գործարքները «անկախ կողմերի միջև գործարքներ» են: Ընկերության բաժնետեր հիմնադիր է հանդիսանում ֆիզ. անձ Ալֆրեդ Հարությունյանը, որը հանդիսանում է նաև ընկերության տնօրենը: Բոլոր այն գործարքները, որոնք կապված են ընկերության բաժնետերոջ հետ, այդ թվում նրա հետ կնքված փոխառության պայմանագիրը համարվում են փոխկապակցված գործարքներ:

Առանցքային կառավարչական անձնակազմի՝ տնօրեն Ալֆրեդ Հարությունյանի համար հաշվարկված աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված վճարումները 2020թ.-ին կազմել է 2.250 հազար դրամ, իսկ 2021թ դրությամբ՝ 3.600 հազ դրամ:

Այսպիսով կապակցված կողմերի հետ բացահայտման ենթակա այլ գործարքներ չեն իրականացվել:

25. Պայմանականություններ

25.1 Գործարար միջավայր

Հայաստանի հանրապետությունում շինարարության բնագավառում իրականացվող փոփոխությունները շարունակական բնույթ են կրում և որպես զարգացող շուկա՝ Հայաստանում աստիճանաբար ձևավորվում է գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Եվ որպես զարգացման պայման, հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացնել մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, միջազգային ստանդարտների պահանջների ապահովմանը: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրականացնում է համապատասխան անհրաժեշտ միջոցառումները Ընկերության ֆինանսական կայունությունն ապահովելու համար:

25.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում:

Բացի տրանսպորտային միջոցների համար սահմանված ԱՊՊԱ-ից Ընկերությունը՝ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների ինչպես նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

25.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն:

Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

25.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված ՀՀ օրենսդրության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

Ղեկավար՝ Ալֆրեդ Հարությունյան

Ֆին. տնօրեն՝ Լիանա Մանուկյան